Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 243 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կառույցների կողմից ուղղորդվող, «ԹԵԺ ԳԻԾ» ծառայության ահազանգերի, ինչպես նաև ծնողների, խնամակալների դիմումների, և երեխայի անձամբ դիմելու պարագայում բռնության ենթարկված, անապաստան, լքված, կրթությունից և այլ հանրային ծառայություններից դուրս մնացած, ինչպես նաև այլ տրավմատիկ տարաբնույթ իրադարձությունների, մասնավորապես տեղահանության հետևանքով հոգեհուզական խնդիրներ ունեցող երեխաներին, նրանց ծնողներին, խնամող և խնամողի փոխարինող հանդիսացողներին (խնամատար ծնողներ) «ճգնաժամի միջամտության» ծառայությունների մատուցման, ներկենտրոնային խնամքի (շուրջօրյա) համար օգտագործվող մասնաշենքի վերանորոգում: Այս ծրագիրը նպատակ ունի բարեկարգելու կենտրոնում երեխաների կենցաղային կենսամիջավայրը, մասնավորապես երեխաների մասնաշենքի 2-րդ հարկը՝ ննջասենյակային հատվածը: Ծրագրի շնորհիվ Հայաստանում առաջին անգամ հնարավոր կլինի ապահովել տարաբնույթ տրավմաների ենթարկված երեխաների սոցիալական վերականգնման և զարգացման համար որակի միջազգային չափանիշներին համապատասխան պայմաններ՝ երեխաների թվին համապատասխանող սանհանգույցների քանակ, կեցության, հանգստի, դասապատրաստման համար պայմաններ:

2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Ճապոնիայի կառավարություն՝ Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատան միջոցով (քաղ. Երևան, Բաբայան 23/4)
4.	Ծրագիրը կատարողը	«Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Կարապետ Ուլնեցու փողոց 64, ՀՎՀՀ 01009295)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Կարապետ Ուլնեցու փողոց 64, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	26,400,771 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Բարձր սոցիալական ռիսկի ներքո գտնվող՝ անապաստան, խնամազուրկ, լքված, բռնությունների զոհ, կրթությունից դուրս մնացած, վարքային խնդիրներ ունեցող երեխաները և նրանց ընտանիքները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից տեղահանված այն երեխաները և նրանց ընտանիքները, որոնք արագ միջամտության և աջակցության կարիք ունեն: Արդյունքում ծրագրից կօգտվեն ընդհանուր առմամբ 620 երեխաներ և նրանց ծնողները, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի ապրիլի 15-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) կենտրոնի մասնաշենքի 2-րդ հարկի վերանորոգում՝ 25,820,771 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 2) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 580,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) մասնաշենքի 2-րդ հարկի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 25,820,771 դրամ (ավելացված արժեքի հարկից ազատում չի ակնկալվում). 2) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 580,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 580,000 դրամ

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ, վերահսկողություն է իրականացվելու Հայ օգնության ֆոնդի Նյու Յորքի և հայաստանյան գրասենյակների, «Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամի խորհրդի, Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատան կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

09.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ